

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ, ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԽՆԴԻՐԸ.

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բանկային գաղտնիքի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի նպատակն է՝ բարձրացնել հարկային մարմնի կողմից իրականացվող վարչարարության արդյունավետությունը՝ նվազեցնելով դրա վրա ծախսվող ռեսուրսները:

2. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

2.1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և ԵՏՄ անդամ պետությունների միջև ներկայումս քննարկումներ են իրականացվում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից առևտրի էլեկտրոնային հարթակից ապրանքների ձեռքբերման դեպքում ԱԱՀ-ի վճարման հարցերի կանոնակարգման նպատակով: Այդ քննարկումների շրջանակներում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մշակված «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրում և «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» N18 հավելվածում փոփոխություններ կատարելու նախագծով նախատեսվում է կանոնակարգել ԵՏՄ անդամ պետությունների հարկ վճարողների կողմից էլեկտրոնային առևտրի շրջանակներում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհամարվող ֆիզիկական անձանց մատակարարվող ապրանքների մասով ԱԱՀ-ի հաշվարկման ու վճարման հետ կապված հարցերը: Այդ փոփոխություններով առաջարկվող կարգավորումները հաշվի առնելով նախատեսվում է համապատասխան փոփոխություններ կատարել նաև ՀՀ հարկային օրենսգրքում հաշվի առնելով, որ՝

1) օրենսգրքի 4-րդ հոդվածով տրված են օրենսգրքի կիրառման իմաստով հասկացությունների սահմանումները, մասնավորապես՝ նույն հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով տրված է ապրանքների մատակարարում հասկացության սահմանումը: Անհրաժեշտություն է առաջանում օրենսգրքով սահմանել ապրանքների էլեկտրոնային առևտուր հասկացությունը, ինչպես նաև այդ հասկացության հետ կապված առևտրի էլեկտրոնային հարթակ հասկացությունը,

2) Նախագծով նախատեսվել են էլեկտրոնային առևտրի շրջանակներում մատակարարվող ապրանքի մասով մատակարարման վայրի որոշման, ապրանքի մատակարարման պահի որոշման, հաշվարկի ներկայացման, ԱԱՀ-ի պարտավորության վճարման և հարկ վճարողի հարկային մարմնում հաշվառման կարգավորումներում:

3) օրենսգրքով սահմանված են անհատ ձեռնարկատերի չհամարվող ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների մասով ֆիզիկական անձանց կողմից ԱԱՀ-ի վճարելու մասով կարգավորումները և

անհրաժեշտ է սահմանել նաև ԵՏՄ անդամ պետություններից էլեկտրոնային առևտրի հարթակի միջոցով անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհամարվող ֆիզիկական անձանց կողմից ձեռքբերված և ՀՀ տարածք ներմուծված ապրանքների մասով էլեկտրոնային առևտրի հարթակի կողմից ԱԱՀ-ի հաշվարկելու ու վճարելու մասով կարգավորումներ:

Մասնավորապես առաջարկվում է.

1) սահմանել օրենսգրքի կիրառման իմաստով ապրանքների էլեկտրոնային առևտուր հասկացությունը՝ հաշվի առնելով այդ ոլորտի կարգավորման մասով ներկայումս ԵՏՄ պայմանագրի 18-րդ հավելվածում նախատեսվող փոփոխությունները,

2) կարգավորել ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ հարկ վճարողների կողմից էլեկտրոնային առևտրի հարթակի միջոցով անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհամարվող ֆիզիկական անձանց ապրանքների հեռավար վաճառքի դեպքում՝

ա. ապրանքի մատակարարման վայրը համարել Հայաստանի Հանրապետությունը, եթե էլեկտրոնային առևտրի շրջանակներում առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ապրանքների փոխադրման (առաքման) ավարտի պահին ապրանքները հանձնվում են անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին Հայաստանի Հանրապետության տարածքում,

բ. հաշվետու ժամանակաշրջան սահմանել հաշվետու եռամսյակը,

գ. ապրանքի մատակարարման պահը որոշել այդ ապրանքի դիմաց վճարում կատարելու օրը ներառող հաշվետու եռամսյակի վերջին օրով,

դ. ԱԱՀ գումարներ վճարելու և ԱԱՀ-ի հաշվարկը ներկայացնելու ժամկետ սահմանել յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ,

3) ապրանքների էլեկտրոնային առևտրի շրջանակներում, եթե ապրանքի մատակարարման վայրը, օրենսգրքին համապատասխան համարվում է Հայաստանի Հանրապետությունը, ապա այդ գործարքների մասով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրելու է առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը,

4) Ապրանքների էլեկտրոնային առևտրի շրջանակներում առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատերի մասով Կառավարության կողմից սահմանել հարկային մարմնում հաշվառման և ԱԱՀ-ի վճարման պարզեցված ընթացակարգ:

2.2. ՀՀ հարկային օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) կատարված փոփոխությունների համաձայն՝ 2019 թվականի հուլիսի 1-ից ձեռնարկատիրական գործունեության առարկա է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե այն օտարվել է ձեռք բերելուց հետո 365 օրվա ընթացքում, իսկ եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ավտոմեքենայի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից: Շարժիչի հզորությունը կիլովատերով արտահայտված լինելու դեպքում համապատասխան հզորության նկատմամբ կիրառվում է 1.36 գործակից:

Որպես վիճակագրություն ներկայացվում է 2019թ. ապրիլ և մայիս ամիսների գործարքները (որոնք հուլիսի 1-ից հետո գործող պայմաններով կհամարվեին հարկվող), մասնավորապես. համաձայն ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից հարկային մարմնին տրամադրված տեղեկատվության՝ 2019 թվականի ապրիլ և մայիս ամիսների ընթացքում ֆիզիկական անձանց կողմից իրականացված ավտոմեքենաների հարկվող գործարքների միջին ամսական թիվը կազմում է մոտ 7,000 հատ:

Ստորև ներկայացվում է հարկային մարմնի կողմից կատարման ենթակա աշխատանքները, ինչպես նաև ֆիզիկական անձանց կողմից կատարման ենթակա գործողությունները՝ եկամտային հարկի հաշվարկը ներկայացնելու և հարկը վճարելու մասով:

Հարկային մարմնի գործողությունները.

✓ Յուրաքանչյուր ամիս ավտոմեքենաների գծով հարկվող գործարքներ իրականացրած ֆիզիկական անձանց մասով կազմվում են ծանուցագրեր՝ երկուական օրինակից (այսինքն՝ միջին վիճակագրությամբ յուրաքանչյուր ամիս մոտ 7,000 ֆիզիկական անձի մասով կազմվելու է մոտ 14,000 փաստաթուղթ),

✓ Ծանուցագրերը ստորագրվում և կնքվում են հարկային մարմնի կողմից,

✓ ՊԵԿ տեղեկատվական բազայում ֆիզիկական անձանց մասով էլեկտրոնային փոստային հասցեների վերաբերյալ տեղեկատվության բացակայության դեպքում (հիմնականում էլեկտրոնային հասցեները բացակայում են) ծանուցագրերը ուղարկվում են փոստային ծառայության միջոցով,

✓ Ծանուցագրերը տեսաներածվում (սքանավորվում) և հաշվառվում են հարկային մարմնում վարվող համապատասխան գրանցամատյանում (այսուհետ՝ Գրանցամատյան),

✓ Ծանուցագրերը ուղարկելու համար տպագրվում է 7000 ծրար, նույնքան վերադարձի թերթիկ,

✓ Ծանուցագրերը տեղադրվում են ծրարների մեջ, վերջիններիս վրա փակցվում է նամականիշ և ուղարկվում ֆիզիկական անձանց,

✓ Փոստային բաժանմունքի կողմից ծանուցագրերի ուղարկման վերաբերյալ հաստատումը առանձին կտրոնների տեսքով ստանալուց հետո՝ այն փակցվում է հարկային մարմնում առկա ծանուցագրերի մեկական օրինակներին,

✓ Փոստային բաժանմունքի կողմից ծանուցումների ստացման կամ վերադարձի վերաբերյալ թերթիկները տեսաներածվում (սքանավորվում) և հաշվառվում են Գրանցամատյանում, փակցվում համապատասխան ծանուցագրերի երկրորդ օրինակների վրա,

✓ Փոստային բաժանմունքից տարբեր նշագրումներով հետ եկած («տեղափոխված», «անհայտ», «չպահանջված», «թերի հասցե») և ֆիզիկական անձանց կողմից չստացած ծանուցագրերի մասով ուղարկվում են հարցումներ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ հաշվառման հասցեների ճշգրտման մասով: Պատասխանը ստանալուց հետո կրկին անգամ ծանուցագրերն ուղարկվում են ստացված նոր հասցեներով,

✓ Չծանուցված ֆիզիկական անձանց մասով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 66-րդ կետի համաձայն՝ իրականացվում է հրապարակային ծանուցում՝ azdarar.am կայքի միջոցով,

✓ Ծանուցված ֆիզիկական անձանց կողմից բազմաթիվ դեպքերում ներկայացվում են բացատրություններ, առարկություններ, որոնք գնահատվում են և պատասխանելու նպատակով կատարվում է հարցումներ՝ ՀՀ ոստիկանության՝ գործարքի պայմանները ճշտելու համար,

✓ Յուրաքանչյուր ամսվա գործարքների մասով հարկային մարմինը մշակում է աճողական ցանկեր՝ նախորդ ամիսների ընթացքում հարկվող գործարքներ իրականացրած միևնույն ֆիզիկական անձանց ծանուցագրեր կազմելու նպատակով և այդ ֆիզիկական անձանց ուղարկվում են ծանուցագրեր՝ ներառելով բոլոր գործարքները,

✓ Գործարքի իրականացման հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ից հետո՝ նախորդ ամբողջ տարվա կտրվածքով կատարված գործարքների գծով կատարվում է գնահատում, մասնավորապես.

➤ առանձնացվում են հարկային հաշվարկ չներկայացրած ֆիզիկական անձանց մասով ցանկերը, կատարվում են հարցումներ ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայություն՝ գործարքի համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ստացման համար և հարկային հաշվարկներ չներկայացրած ֆիզիկական անձանց մասով կազմվում են հարկային պարտավորությունների հաշվարկներ՝ գանձման որոշումներ

կայացնելու նպատակով այլ ստորաբաժանումներ ներկայացնելու համար, որից հետո ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությունը սկսում է գանձման որոշումների կայացման գործընթացը,

➤ սխալներով ներկայացված հարկային հաշվարկների մասով՝ կազմվում են կամերալ ուսումնասիրության արձանագրություններ՝ հետագա ընթացքն ապահովելով գործող կարգավորումներին համապատասխան,

✓ Կազմված բոլոր ծանուցագրերի ու կամերալ արձանագրությունների գնահատման նպատակով տպագրվում են գնահատման թերթիկներ, փակցնելով համապատասխան փաթեթներին՝ ուղարկվում ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության համապատասխան բաժիններ, որոնց կողմից ֆիզիկական անձանց համար բացվում են հարկային գործեր՝ դրանցում փաստաթղթերը պահպանելու համար:

✓ Հարկային հաշվարկներ չներկայացրած ֆիզիկական անձանց մասով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությունը հարուցում է վարչական վարույթ հարկային պարտավորությունները գանձելու համար, սահմանված ձևով ծանուցում է ֆիզիկական անձանց, այնուհետև՝ հայցադիմումներ են ներկայացվում ՀՀ վարչական դատարան՝ ֆիզիկական անձանց կողմից չվճարված հարկային պարտավորությունների գումարները բռնագանձելու նպատակով, որից հետո դատարանի համապատասխան գործով կայացվում են վճիռներ՝ հայցերը բավարարելու կամ մերժելու մասով և կատարվում են հետագա դատական գործողությունները:

✓ Բացի այդ, Օրենսգրքով սահմանված ժամկետում հարկային հաշվարկ չներկայացրած ֆիզիկական անձանց նկատմամբ ՀՀ ՊԵԿ-ի կողմից նույնպես իրականացվում են բազմաքայլ գործողություններ՝ վերջիններիս վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

Ֆիզիկական անձանց կողմից հարկվող գործարքների մասով առաջացող հարկերը վճարելու համար պարտադիր կարգարման ենթակա գործողությունները.

✓ Ֆիզիկական անձինք ներկայանում են հարկային մարմնի սպասարկման սրահ,

✓ Սրահից ստանում են հարկ վճարողի հաշվառման համար,

✓ Կնքում են էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնելու պայմանագիր, գրանցում լիազոր (ակտիվ նույնականացման քարտի առկայությունը պարտադիր է),

✓ Դիմում են հարկային հաշվարկը լրացնելու և ներկայացնելու ունակություն ունեցող անձի կամ հաշվապահի, անհրաժեշտության դեպքում վճարելով հավելյալ գումար (մոտ 15,000 եկամտային հարկ վճարելու համար հնարավոր է վճարեն մոտ 5,000 դրամ):

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ըստ էության, Օրենսգրքի փոփոխությամբ ֆիզիկական անձանց միջև ավտոմեքենայի օտարման գործարքի համար սահմանված եկամտային հարկի հաշվարկման դրույքաչափը և մեթոդիկական պարզեցվել է և միաժամանակ այդ գործարքները պետական գրանցում են ստանում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում, ուստի Նախագծերի փաթեթով, մասնավորապես, առաջարկվում է ֆիզիկական անձանց միջև այդպիսի գործարքների դեպքում եկամտային հարկի փոխարեն սահմանել պետական տուրք և դրա գանձումը վերապահել Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

Միաժամանակ, Նախագծերի փաթեթում ներառված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանվել է որ օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու օրվանից ֆիզիկական անձի կողմից ավտոմեքենայի (հաշվառված կամ պետական գրանցում ստացած) օտարման գործարքներից առաջացած Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված վճարման ենթակա եկամտային հարկերի չկատարված պարտավորությունների վրա Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետը չի տարածվում: Այս

փոփոխությամբ հնարավորություն կտրվի հարկային մարմինն վերը նկարագրված օրենքով նախատեսված ընթացակարգերի պահպանմամբ իրականացնել խնդրո առարկա գործարքների մասով հարկային պարտավորությունների կատարումը:

2.3. Նախագծում լրացվում է նոր հոդված, որով նախատեսվում է կարգավորել հարկային մարմնի կողմից բանկային գաղտնիք համարվող տեղեկությունների ստացման հետ կապված հարաբերությունները: Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հարկային մարմնին կարող են տրամադրվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկային մարմինը նույնպես հանդիսանում է գաղտնիք տնօրինող պետական մարմին, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հարկային մարմինը պահպանում է ՀՀ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդպիսի տեղեկությունները հարկային մարմնին օգտագործում է հարկային հսկողության սահմաններում և շրջանակներում, ինչպես նաև իր առջև դրված խնդիրներին ու նպատակներին համապատասխան:

Այս իմաստով կարևոր է նաև «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված դրույթները, համաձայն որոնց՝ հարկային ծառայողը, ի թիվս այլ պարտականությունների, պարտավոր է օրենքով սահմանված կարգով պահպանել պետական, ծառայողական և օրենքով պահպանվող այլ գաղտնիք, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո: Այսինքն՝ գաղտնիքը պահպանելը հարկային ծառայողի պաշտոնական պարտականություններից է, որն պարտադիր ենթակա է կատարման:

Նշվածի հետ կապված հարկ ենք համարում նշել, որ հարկային մարմնի կողմից իրականացվող հարկային հսկողության ընթացքում հարկ վճարողները հաճախ հրաժարվում են ներկայացնել բանկային հաշիվների շարժերի, դրանց նպատակների, վարկային և ավանդի պայմանագրերի, գրավի առարկաների, երաշխավորների վերաբերյալ տեղեկությունները, ինչը երբեմն անհնարին է դարձնում հսկողական աշխատանքների նպատակների իրագործումը, քանի որ որևէ այլ եղանակով հնարավոր չէ տեղեկություններ ստանալ բանկային հաշիվների շարժերի, դրանց նպատակների, ստացողների, յուրաքանչյուր հաշվի՝ հաշվետու ժամանակաշրջանի սկզբնական և վերջնական մնացորդի մասին: Գործող իրավակարգավորումներով՝ հարկային հսկողության ընթացքում առանց այդ հարկ վճարողների բանկային հաշիվների շարժերի տիրապետման գրեթե անհնար է բացահայտել եկամուտների թերհայտարարագրումները: Այսինքն՝ հարկային հսկողության ընթացքում առանցքային նշանակություն ու դեր ունեն բանկային (ֆինանսական) փոխանցումները և այլ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները:

Հարկային հսկողական աշխատանքների ընթացքում բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ ձեռք բերելը գործնականում ունենում է որոշակի բարդություններ և խոչընդոտներ նաև այն հանգամանքներով պայմանավորված, որ մասնավորապես տնտեսվարող սուբյեկտի կողմից տրամադրվում է իրենց մոտ առկա հաշվապահական ծրագրերից վերձանված տեղեկատվությունը (ինչը տնտեսվարողի կողմից մեկնաբանվում կամ բացատրվում է, որպես ավելորդ և լրացուցիչ չձանրաբեռնվելու պատճառ), որը օբյեկտիվորեն չի կարող համարվել հավաստի, հստակ և ամբողջական տեղեկատվություն՝ առնվազն այն հանգամանքից ելնելով, որ տնտեսվարողն ունի հնարավորություն հաշվապահական ծրագրին միջամտելու և ապահովագրված չեն այդ ծրագրերում սխալներ թույլ տալուց:

Գործնականում հանդիպում են նաև այնպիսի դեպքեր, երբ անհրաժեշտություն է առաջանում վերոգրյալ տեղեկատվությունը ուսումնասիրել նաև անլուր (գաղտնի) եղանակով:

Որպես օրինակ՝ հարկ ենք համարում նշել այլ պետություններում՝ բանկային գաղտնիքի վերաբերյալ որոշ օրենսդրական կանոնակարգումներ. մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի և Գերմանիայի մասով:

Ռուսաստանի Դաշնության «Բանկերի և բանկային գործունեության մասին» դաշնային օրենքի 26-րդ հոդվածով սահմանվում է, որ իրավաբանական անձանց և առանց իրավաբանական անձ կազմավորելու

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող քաղաքացիների գործարքների և բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքները ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվում են դատարաններին (արբիտրաժային դատարաններին (դատավորներին)), Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատին, հարկային մարմնին, Ռուսաստանի Դաշնության կենսաթոշակային ֆոնդին, Ռուսաստանի Դաշնության սոցիալական ապահովության հիմնադրամին, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարման մարմիններին, այլ մարմիններին և պաշտոնատար անձանց այն դեպքերում, երբ այդպիսի տեղեկությունների տրամադրումը նախատեսված է իրենց գործունեության վերաբերյալ իրավական ակտերով, հետաքննության մարմնի ղեկավարի համաձայնության առկայության դեպքում՝ այդպիսի տեղեկությունները տրամադրվում են նաև հետաքննության մարմնին՝ իր վարչություն գտնվող գործերի շրջանակներում:

ՌԴ հարկային օրենսգրքի 86-րդ հոդվածով նախատեսված է, որ բանկը պարտավոր է հայտնել կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) բանկային հաշիվների բացման և փակման, բանկային հաշիվների ռեկվիզիտների փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև հարկային մարմնի հիմնավորված հարցման առկայության դեպքում բանկը պարտավորվում է հարկային մարմնին տրամադրել տեղեկանք բանկային հաշվի առկայության և (կամ) բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդի, դրանց միջոցով գործարքներ կատարելու վերաբերյալ:

Գերմանիայում և Ֆրանսիայում հաճախորդների բանկային հաշվում առկա դրամական միջոցների, դրանցով գործարքներ կատարելու վերաբերյալ տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք և ենթակա չեն հրապարակման: Նշված երկրներում բանկային գաղտնիք համարվող տեղեկությունները կարող է բանկը տրամադրել դատարանին կոնկրետ անձի նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում: Գերմանիայի և Ֆրանսիայի քրեական օրենսգրքով բանկային գաղտնիք համարվող տեղեկությունների հրապարակման համար սահմանվել է քրեական պատասխանատվություն:

Միաժամանակ, **Ֆրանսիայի օրենսդրությամբ** Ֆրանսիայի հարկային մարմինը հասանելիություն ունեն բանկային գաղտնիք համարվող տեղեկությունների բազային. մասնավորապես՝ հաճախորդի կողմից յուրաքանչյուր բանկային հաշիվ բացելու, դրամական փոխանցումներ կատարելու, այլ գործարքների վերաբերյալ: Հարկային ընթացակարգերի կանոնակարգի դրույթներին համապատասխան՝ ֆիսկալ գործակալները հարկային հսկողության նպատակով իրավունք ունեն վարկային կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ առևտրային գրքերի, վարկային փաստաթղթերի, ինչպես նաև վարկային կազմակերպության ծառայողական փաստաթղթերի վերաբերյալ:

Գերմանիայի «Հարկային պարտավորությունների կատարումից խուսափելու կանխարգելման մասին» օրենքի շրջանակներում (ուժի մեջ է մտել 2017թ.) Գերմանիայի՝ հասարակական կառույցների, դատական ակտերի հարկադիր կատարողների հետ միաժամանակ, հարկային գործերով դաշնային կենտրոնական կառույցը իրավունք ունի բանկերից պահանջել և ստանալ բանկային գաղտնիք համարվող տեղեկություններ ներդրողների բանկային հաշիվների վերաբերյալ՝ առանց վերջիններիս այդ մասին ծանուցելու:

Միաժամանակ, հաշվի առնելով նախագծերի կարևորությունը՝ ցանկանում ենք նշել, որ միջազգային տարբեր կառույցների կողմից իրականացված ուսումնասիրություններում և հրապարակված զեկույցներում ևս բազմիցս մատնանշվել է նշված ուղղություններում խնդիրների առկայությունը: Մասնավորապես՝ **Արժույթի միջազգային հիմնադրամի** Հարկաբյուջետային հարցերի վարչության առաքելության 2020 թվականի փետրվարի 19-ից մարտի 3-ն ընկած ժամանակահատվածում Հայաստան կատարած այցելության և իրականացրած ուսումնասիրության արդյունքներով 2020 թվականի հունիսին հրապարակված «Կարգապահության ռազմավարության մշակում հարկային վարչարարության համար» զեկույցի «Ֆինանսական հաշվի տեղեկություններին ավտոմատ հասանելիության թույլատրում» ենթաբաժնի 44-րդ կետով անդրադարձ է կատարվել ՊԵԿ-ին՝ ֆինանսական հաշվի տեղեկություններին ավտոմատ հասանելիության

անհրաժեշտությանը՝ Գլոբալ ֆորումի հանձնառությունների շրջանակում արտասահմանից հաշվետվությունների ներկայացմանը զուգահեռ: Ձեկույցում նշված է, որ «հարկային ռիսկի տեսանկյունից տվյալների ամենանշանակալի աղբյուրը բանկերն ու ֆինանսական հաշիվների վերաբերյալ այլ տեղեկություններն են, իսկ հարկային նպատակով բանկային գաղտնիքի բարձր մակարդակի պահպանումը հակասում է միջազգային նորմերին, խրախուսում է հարկերի վճարումից չարամտորեն խուսափելուն և խաթարում է կամավոր հարկային կարգապահությունը: Նման մոտեցումը չի համապատասխանում նաև ՀՀ միջնաժամկետ հանձնառությանը՝ ոչ ռեզիդենտների բանկային տեղեկություններն ավտոմատ փոխանակելու և արտասահմանում ՀՀ ռեզիդենտների ունեցած հաշիվների վերաբերյալ փոխադարձ հաշվետվություններ ստանալուն: Առանց ներքին հարկ վճարողների վերաբերյալ բանկային հաշվետվությունները նման ավտոմատ կերպով ներկայացման, ՀՀ ռեզիդենտի չհայտարարագրած միջոցներն ավելի քիչ հավանական է, որ կհայտնաբերվեն, եթե դրանք պահվեն հայկական բանկում՝ օֆշորային վայրի փոխարեն»: Արժույթի միջազգային հիմնադրամը զեկույցում, ինչպես նաև հետագայում մի շարք քննարկումների ընթացքում առաջարկել է «նախատեսել ՊԵԿ-ին բանկային և այլ ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ ներկայացման հնարավորություն՝ Գլոբալ ֆորումի հանձնառությունների շրջանակում արտասահմանից հաշվետվությունների ներկայացմանը զուգահեռ այն երկրի ներսում ներդնելով»:

Հարկ ենք համարում նշել, որ **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD)** հարկաբյուջետային հարցերով հանձնաժողովի (այսուհետ՝ ՏՀԶԿ) կողմից 2000թ. «Հարկման նպատակով բանկային գաղտնիք համարվող տեղեկատվության մատչելիության բարելավում» զեկույցի մեջ ևս արձանագրվել է, որ շատ երկրներ այսօր ուղղակիորեն կամ անուղղակիորեն պետք է ապահովեն հարկային մարմինների հասանելիությունը բանկային գաղտնիք համարվող տեղեկատվությանը, որը կնպաստի վերջիններիս կողմից ամբողջությամբ կատարելու հարկերի (եկամուտների) հավաքագրման իրենց պարտականությունը: Նշված զեկույցում նախատեսվել է նաև, որ բանկային գաղտնիքի՝ հարկային մարմիններին հասանելի չլինելու պայմաններում հարկ վճարողներին հնարավորություն է տրվում կատարելու ապօրինի գործողություններ, խուսափել հարկերը վճարելուց և իրականացնել օրենքի շրջանցմամբ այլ ֆինանսական գործարքներ: Ըստ նշված զեկույցի՝ որոշ երկրներում բանկային գաղտնիք համարվող տեղեկատվությանը հարկային մարմիններն ունեն ուղղակի և անուղղակի ձևերով հասանելիություն, այսինքն՝ կամ հարկային մարմինը ուղղակիորեն մուտք ունի բանկային տեղեկատվության կենտրոնացված տվյալների բազային կամ այդ տեղեկատվությունը ստանում են ուղղակիորեն բանկից: Միաժամանակ, զեկույցում արձանագրվել է, որ հարկային մարմինները պետք է հանդիսանան որևէ ձևով փոխանակված բանկային գաղտնիք համարվող տեղեկատվության պաշտպանության երաշխավոր:

Հիմք ընդունելով բանկային գաղտնիքի ստացման և հարկային մարմնի կողմից հարկային հսկողության շրջանակներում այն օգտագործելու անհրաժեշտությամբ պայմանավորված ներկայացված հիմնավորումները և միջազգային պրակտիկան՝ անհրաժեշտություն է առաջացել Նախագծում, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները, մասնավորապես.

Օրենսգրքի՝ լրացվող 350.1 հոդվածով նախատեսվել է, որ հարկային հսկողության շրջանակում բանկային գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու նպատակով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք հարկ վճարողից (բացառությամբ ֆիզիկական անձի) գրավոր պահանջում են էլեկտրոնային կամ թղթային եղանակով տրամադրել հարկային հսկողության ժամանակահատվածին վերաբերող յուրաքանչյուր հաշվի վերաբերյալ էլեկտրոնային կամ թղթային բանկային հաշվի քաղվածքը, ինչպես նաև բանկային հաշվի քաղվածքը հարկային մարմնի կողմից Հայաստանի

Հանրապետության կենտրոնական բանկի միջոցով ստանալու համաձայնությունը: Հարկ վճարողների կողմից հարկային մարմնի պահանջով քաղվածքները չտրամադրելու դեպքում դրանք հարկային մարմնի կողմից կարող են ստացվել դատարանի որոշմամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացվող 31.8 գլխով սահմանված կարգով:

«Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվել է, որ, բացի գործող կանոնակարգումներից, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները նաև կարող են տրամադրվել ՀՀ հարկային մարմնին ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 31 .8 գլխով սահմանված կարգով:

Միաժամանակ, անհրաժեշտություն է առաջացել սահմանելու, որ Կենտրոնական բանկի բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի տվյալների հիման վրա «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկությունները Կենտրոնական բանկը տրամադրում է Հայաստանի Հանրապետության հարկային մարմնին «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ մի քանի աղբյուրից ստացման ենթակա (ստացված) եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները մասնակիցներին վերադարձնելու նպատակով:

2.4. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, ներառյալ՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

Նույն օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ի համաձայն կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

Վերոնշյալ կանոնակարգման կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ շատ հաճախ էականորեն սահմանափակում է վարչական մարմինների՝ որպես դատավարության կողմի, դատավարության ընթացքում հավասար հնարավորություններ ունենալու իրավունքը: Շատ հաճախ վարչական ակտի հասցեատերերը ոչ արժանահավատ փաստաթղթեր են ներկայացնում դատարան և դատարանն էլ, իր հերթին ունենալով օրենսդրական պարտականություն, ընդունում է կողմի ներկայացրած ապացույցները, որն էլ շատ դեպքերում անհարկի հանգեցնում է վարչական ակտերի անվավեր ճանաչման:

Միաժամանակ, ՀՀ հարկային օրենսգրքի գործող կանոնակարգումների շրջանակներում իրականացվող վարչական վարույթի արդյունքում կայացված վարչական ակտերի բողոքարկման դեպքում հարկ վճարողներն իրենց համար բարենպաստ հանգամանքներ պարունակող տեղեկատվությունը ներկայացնում են դատական քննության ընթացքում, որոնք էլ վարչական ակտերի անվավեր ճանաչման հիմք են հանդիսանում:

Այսպիսով, ստացվում է, որ դատարանը, անսահմանափակ ապացույցներ ներկայացնելու հնարավորություն ընձեռելով կողմին (վարչական ակտերի դեպքում՝ վարչական ակտի հասցեատիրոջը), նսեմացնում է վարչական մարմինների վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունը, մասնավորապես նման հնարավորություն ընձեռելով կողմին՝ դատարանն արդեն իսկ կանխակալ վերաբերմունք է ցուցաբերում վարչական վարույթի և կազմված վարչական ակտի վերաբերյալ: Բացի այդ ստացվում է, որ վարչական մարմինը ներկայացված ապացույցների հիման վրա, ըստ էության, իրականացնում է իրավաչափ վարչարարություն, սակայն կողմի անբարեխիղճ վարքագծի պատճառով, այն է՝ առանց հիմնավոր պատճառի ապացույցները վարչական վարույթում չներկայացնելը հիմնավորելու,

հնարավորություն է ստանում դատական կարգով նոր վարույթի իրականացման մասնակից դառնալ, ինչը չի բխում պետական մարմինների՝ արդյունավետ և խնայողական վարչարարություն իրականացնելու սկզբունքներից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է, որ կողմն իրավունք չունի ներկայացնել այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում և կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացվող նշված կարգավորումը առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը), նոր իրավունքներ և պարտականություններ չի սահմանում, այլ նպատակ ունի հստակեցնել կողմերի իրավունքները և պարտականություններն ապացույցների ներկայացման մասով նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կարգավորման շրջանակում:

Բացի այդ, նախատեսվում է, որ վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

Այսինքն՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով կատարվող լրացումներն առաջին հերթին նպատակ ունեն ավելի ամրապնդել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով նախատեսված դրույթն առ այն, որ գործի քննության ընթացքում դատարանը պարտավոր է ապահովել դատավարության կողմերի հավասար հնարավորությունների իրացումը: «Հայաստանի

Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է, որ հարկ վճարողների կողմից իրենց համար բարենպաստ համարվող տեղեկությունները հարկային հսկողության ընթացքում չտրամադրելու դեպքում դրանք, որպես բարենպաստ փաստական հանգամանքներ, չեն կարող ներկայացվել վարչական ակտի վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում և հարկ վճարողները (հարկային գործակալը) կրում են դրանց բացակայության՝ գործի ելքը պայմանավորող բացասական հետևանքների ռիսկը, եթե չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից: Միաժամանակ, սահմանվել է, որ դրանց չտրամադրման հետևանքով առաջադրված պարտավորությունների ապացուցման պարտականությունը (բեռը) չի կարող դրվել հարկային մարմնի վրա:

2.5. Նախագծով առաջարկվում է նաև Օրենսգրքով սահմանել հարկ վճարողների կողմից անալիտիկ հաշվառում վարելու պարտադիր պահանջ՝ միաժամանակ սահմանելով անալիտիկ հաշվառման հասկացությունը: Հարկային հսկողության շրջանակներում հանդիպում են դեպքեր, երբ հարկ վճարողները չեն վարում անալիտիկ հաշվառում կամ հարկային մարմնին չեն տրամադրում նման հաշվառման վերաբերյալ տվյալներ՝ հատկապես այնպիսի ոլորտներում որոնցում նման հաշվառում չվարելը իրատեսական չէ: Նախագծով նախատեսվել է, որ 200 մլն. դրամը գերազանցող իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ ունեցող հարկ վճարողի կողմից առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով անալիտիկ հաշվառում չվարելը կամ անալիտիկ հաշվառման տվյալները չտրամադրելը, իսկ առևտրական (առք ու

վաճառքի) գործունեությունից տարբերվող գործունեության մասով անալիտիկ հաշվառում չվարելը կամ անալիտիկ հաշվառման տվյալները չտրամադրելը, եթե նման հաշվառման վարումը օբյեկտիվորեն հնարավոր է, կարող է հիմք հանդիսանալ հարկային պարտավորություններն ուղղակի եղանակով հաշվարկելու համար:

Առևտրական գործունեությունից տարբերվող գործունեության տեսակների մասով նման կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ դեպքերում, օրինակ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության որոշ ոլորտում, նման հաշվառում վարելը կարող է ծախսատար համարվել կամ օբյեկտիվորեն ոչ հնարավոր համարվել և այդ դեպքերի մասով անուղղակի եղանակով հարկային պարտավորությունների հաշվարկման հիմքեր չեն առաջանա:

Միաժամանակ, Նախագծով Օրենսգրքի 351-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է համալիր հարկային ստուգումների ընթացքում հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակներով հարկ վճարողի հարկման բազաների և հարկային պարտավորությունների գնահատման (վերագնահատման) ևս մեկ հիմք, այն է՝ հաշվապահական հաշվառման կամ հարկային պարտավորություններին առնչվող հաշվառման փաստաթղթերում կամ հարկային հաշվարկներում արտացոլված հարկի հաշվարկման առնչվող տվյալների և հարկային պարտավորություններ առաջացնող գործառնությունների վերաբերյալ բանկային հաշվի քաղվածքում արտացոլված տվյալների անհամապատասխանությունը:

2.6. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը տարածվում է ՀՀ-ում պետական գրանցում ունեցող իրավաբանական անձանց (ներառյալ՝ դրանց ստեղծած հիմնարկների), օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների (այսուհետ՝ կազմակերպություններ): Անհատ ձեռնարկատերերը օրենսդրությամբ հաշվապահական հաշվառում վարելու պարտականություն չունեն: Մյուս կողմից, ՀՀ քաղաքացիական և ՀՀ հարկային օրենսդրությունը հնարավորություն է տալիս անհատ ձեռնարկատերերին իրականացնել օրենսդրությամբ թույլատրված ցանկացած գործունեություն՝ անկախ դրա մասշտաբներից: Այսպիսով, օբյեկտիվորեն ստեղծվում է մի իրավիճակ, երբ անհատ ձեռնարկատերերը գործելով հարկման ընդհանուր համակարգում, հանդիսանալով ԱԱՀ և շահութահարկ, օրենսդրությամբ հաշվառում վարելու պահանջներ չունեն: Միաժամանակ, անհատ ձեռնարկատերերն իրենց գործունեության արդյունքներով ձևավորվող ֆինանսական դրական արդյունքները հնարավորություն ունեն տնօրինելու՝ առանց լրացուցիչ հարկային պարտավորությունների՝ ի տարբերություն առևտրային իրավաբանական անձանց մասնակիցների, որոնք ֆինանսական արդյունքները շահաբաժնի տեսքով ստանալիս պարտավոր են վճարել եկամտային հարկ:

Նախագծով առաջարկվում է, սահմանել որ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են վարել ակտիվների և պարտավորությունների հաշվառում Կառավարության սահմանած կարգով:

Միաժամանակ, նախատեսվում է ընդհանուր հարկման համակարգում գործող անհատ ձեռնարկատերերի համար շահութահարկի դրույքաչափը սահմանել 23 տոկոս՝ 18 տոկոսի փոխարեն:

2.7. ՀՀ հարկային օրենսգրքի 114-րդ հոդվածով սահմանված են շահութահարկ վճարողի կողմից ներգրավված վարկերի և (կամ) փոխառությունների գծով տոկոսային ծախսերի համախառն եկամտից նվազեցման որոշ սահմանափակումներ, որոնցից է անտոկոս կամ ցածր տոկոս փոխառության տրամադրման դեպքերում ներգրավված վարկերի կամ փոխառությունների տոկոսային ծախսերի նվազեցման սահմանափակումներ:

Այսպես, նույն հոդվածի համաձայն, մասնավորապես սահմանված է, որ համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ բանկ և վարկային կազմակերպություն չհամարվող շահութահարկ վճարողների ստացած վարկերի և (կամ) փոխառությունների գծով հաշվարկվող տոկոսների գումարները, եթե **այդ վարկերի և (կամ) փոխառությունների գումարները** անտոկոս տրամադրվում են այլ հարկ վճարողների: Մինչդեռ, գործնականում հնարավոր չէ որևէ կերպ պարզել (բացառությամբ բացառիկ դեպքերի) տարբեր արդյունքներից և տարբեր ժամանակահատվածներում ներգրավված «այդ» միջոցները որոնք են, որ

տրամադրվել է անտոկոս, որպեսզի դրանց մասով տոկոսային ծախսը չնվազեցվի համախառն եկամտից: Մյուս կողմից, եթե նույնիսկ «սեփական» միջոցների հաշվին տրամադրված լինի, ապա ստացվում է, որ կազմակերպությունը ունենալով սեփական միջոցներ, ներգրավել է վարկային միջոցներ, որոնք մասով ձևավորվում է տոկոսային ծախս և միևնույն ժամանակահատվածում անտոկոս կան ցածր տոկոսով տրամադրում է փոխառություններ այլ անձանց:

Անտոկոս տրամադրվելու դեպքում նախագծով նախատեսվել է, որ հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չնվազեցվող ծախսերի մեծությունը որոշվում է անտոկոս տրամադրված փոխառության գումարի նկատմամբ կիրառելով անտոկոս տրամադրված փոխառության ժամանակահատվածում գործող ստացած վարկերի և (կամ) փոխառությունների տոկոսադրույքներից առավելագույն տոկոսադրույքը:

Ցածր տոկոսադրույքով տրամադրվելու դեպքում նախագծով նախատեսվել է, որ հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չնվազեցվող ծախսերի մեծությունը կորոշվի տրամադրված փոխառության գումարի նկատմամբ կիրառելով տրամադրված փոխառության ժամանակահատվածում գործող ստացած վարկերի և (կամ) փոխառությունների տոկոսադրույքներից առավելագույն տոկոսադրույքի և տրամադրված փոխառության տոկոսադրույքի դրական տարբերությունը (տոկոսադրույքը):

2.8 ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն, ֆիզիկական անձանց հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող գյուղատնտեսական արտադրանքի, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող կամ վարձակալությամբ օգտագործվող գույքի գծով առաջացող ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերով:

Միաժամանակ, օրենսգրքի 120-րդ հոդվածի համաձայն, ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող յուրաքանչյուր ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների ընդունման և (կամ) ծառայությունների ստացման գործարքներին վերաբերող՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 13-րդ մասին համապատասխան հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով հիմնավորված ծախսերի այն մասը, որը ամսական կտրվածքով գերազանցում է երեք միլիոն դրամը:

Ստացվում է, որ թեև շահութահարկ վճարողը ֆիզիկական անձին վճարվող եկամուտների մասով որպես հարկային գործակալ իրականացնում է հարկային պարտավորությունների հաշվարկումը և պետական բյուջե վճարումը այդ գործարքների ամբողջ արժեքի նկատմամբ, բայց չի կարողանում նվազեցնել 3.0 մլն դրամը գերազանցող ծախսերը՝ առկա սահմանափակման պատճառով: Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել 120-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված սահմանափակումը:

3. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով, մշակվել է Նախագծերի փաթեթը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագծի փաթեթը մշակվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

Նախագծի փաթեթի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1830-Լ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 3-րդ կետով սահմանված վարչարարության արդյունավետության բարձրացում, եկամուտների ավելացում, սուվերի կրճատում նպատակից: Մասնավորապես, Որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2.1-րդ կետի 2.1.9-րդ ենթակետով նախատեսվել է կատարելագործել հարկային կարգապահության ռիսկերի բացահայտման, գնահատման և նվազեցման գործընթացները:

6. Նպատակը և ակնկալվող արդյունքը.

Նախագծերի փաթեթի հիմնական նպատակն է՝

- բարձրացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին պետության կողմից մատուցվող ծառայությունների որակը՝ միաժամանակ նվազեցնելով հարկային վարչարարությունը և դրա վրա ծախսվող ռեսուրսները և ծախսերը,

- սահմանել, որ հարկային հսկողության շրջանակում բանկային գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու նպատակով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք հարկ վճարողից (բացառությամբ ֆիզիկական անձի) գրավոր պահանջում են էլեկտրոնային կամ թղթային եղանակով տրամադրել հարկային հսկողության ժամանակահատվածին վերաբերող յուրաքանչյուր հաշվի վերաբերյալ էլեկտրոնային կամ թղթային բանկային հաշվի քաղվածքը, ինչպես նաև բանկային հաշվի քաղվածքը հարկային մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջոցով ստանալու համաձայնությունը,

- սահմանել հարկ վճարողների կողմից անալիտիկ հաշվառում վարելու, անհատ ձեռնարկատերերի կողմից ակտիվների և պարտավորությունների հաշվառում վարելու պահանջ,

- Հարկման ընդհանուր համակարգում գործող անհատ ձեռնարկատերերի համար շահութահարկի դրույքաչափը սահմանել 23%,

- իրավակիրառ պրակտիկայի արդյունքներով՝ լրացնել համալիր հարկային ստուգումների ընթացքում հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակներով հարկ վճարողի հարկման բազաների և հարկային պարտավորությունների գնահատման (վերագնահատման) ևս 2 հիմք,

- սահմանել, որ հարկ վճարողն ստուգման ակտի վարչական և դատական կարգով բողոքարկման վարույթում իրավունք չունի ներկայացնել այնպիսի ապացույցներ, որոնք չի ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, եթե չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից, միաժամանակ նախատեսելով, որ հարկ վճարողի կողմից իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել հարկային մարմնի վրա,

- սահմանել ապրանքների էլեկտրոնային առևտրի մասով ՀՀ հարկային օրենսգրքով համապատասխան կարգավորումներ,

- ֆիզիկական անձանց միջև ավտոմեքենաների օտարման գործարքների դեպքում եկամտային հարկի փոխարեն սահմանել պետական տուրք և դրա գանձումը վերապահել Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը,

- սահմանել որ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ֆիզիկական անձանց կողմից իրականացված՝ ավտոմեքենաների օտարման գործարքներով առաջացած եկամտային հարկի չկատարված պարտավորությունների նկատմամբ վաղեմության ժամկետները կիրառելի չեն,

- սահմանել, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան քննիչի պատճառաբանված որոշմամբ նշանակված համալիր հարկային ստուգման արդյունքներով ընդունված հարկային պարտավորություններ առաջադրող ստուգման ակտերն ուժի մեջ են մտնում քրեական վարույթով եզրափակիչ դատավարական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդ օրվանից,

- ուժը կորցրած ճանաչել 120-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված 3,0 մլն դրամը գերազանցող ծախսերի նվազեցման սահմանափակումը: